

ՀՀ ՓՊ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրը) նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՆԱԽԱԲԱՆ»

Փաստաբանի վարքագծի կանոնագիրը սահմանում է փաստաբանական էթիկայի սկզբունքները և փաստաբանի վարքագծի կանոնները, որոնք հիմնված են փաստաբանության բարոյական չափանիշների և ավանդությների, ինչպես նաև փաստաբանական գործունեության միջազգային ստանդարտների և կանոնների վրա:

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգը սահմանվում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնագրքով (այդ թվում՝ սույն կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգ»-ով):

2. Կանոնագրքի 1.1 ենթակետի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Փաստաբանի գործունեությունը փաստաբանի վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտականություններ՝

- **Վստահորդի նկատմամբ:** Փաստաբանը վստահորդին համապարփակ կերպով բացատրում է նրա իրավունքները, պարտականությունները և դրանց իրացման իրավական հետևանքները, ջանասիրաբար ներկայացնում իր վստահորդի շահերը, այդ թվում՝ դատավարությունում, ինչպես նաև վերջինիս հանձնարարությամբ արտադատական կարգով բանակցում է այլ անձանց հետ իր վստահորդի իրավական խնդրի՝ վերջինիս համար ամենաբարենպաստ լուծման համար.

- **Դատարանների և այլ մարմինների առաջ:** որտեղ փաստաբանը պաշտպանում է գործը և հանդես է գալիս վստահորդի անունից: Այս հարաբերություններում փաստաբանը պետք է հարգի օրենքը և այն պետական ինստիտուտները, որոնց հետ նա հարաբերվում է, պետք է նպաստի իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը և, ընդհանուր առմամբ, արդարադատության և վարչարարության պատշաճ և իրավաչափ իրականացմանը.

- **Փաստաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես:** Այստեղ փաստաբանը պետք է հանդես գա որպես իրավաբանական հանրույթի պատասխանատու անդամ, օգտագործի իր գիտելիքները ոչ միայն իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս, այլև դրանք ի նպաստ դնի փաստաբանական համայնքի զարգացմանը, կարգավիճակի ամրապնդմանը.

- **հասարակության նկատմամբ,** որի համար ազատ և անկախ մասնագիտության առկայությունը՝ համակցված այդ մասնագիտությանը վերաբերող

կանոնների նկատմամբ հարգանքով, մարդու իրավունքների պաշտպանության կարևոր միջոց է՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության հղորդության և հասարակության այլ շահերի: Փաստաբանը իր գործունեությամբ պետք է նպաստի հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, այդ թվում՝ անձնական օրինակով ցույց տալով իրավունքի պաշտպանի օրինակելի կերպարը:»:

3. Կանոնագրքի 1.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.3 Կանոնագրքի նպատակը

Փաստաբանների գործունեության աճը անհրաժեշտություն է ստեղծել հասարակության շահերի շրջանակում ծևակերպել համընդհանուր կանոններ, որոնք կվերաբերեն Հայաստանի Հանրապետության բոլոր փաստաբաններին:

Փաստաբանի վարքագիծի կանոնագրքով սահմանված կանոնները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, Պալատի կանոնադրության, ինչպես նաև սույն Կանոնագրքի 1.1 կետի և ընդհանուր սկզբունքների համատեքստում:

Փաստաբանի վարքագիծի կանոնների ենթադրյալ խախտման հիմքով հարուցվող կարգապահական վարույթի արդյունքում ընդունվող որոշումը պետք է հիմնվի պատասխանատվության անհատականացման սկզբունքի վրա և Կանոնագրքի կանոնները կիրառելիս հաշվի առնի կոնկրետ իրավախախտման փաստական համատեքստը, փաստաբանի պատասխանատվությունը ծանրացնող և մեղմացնող հաստատված հանգամանքները, որոնց հիման վրա էլ պետք է տեղի ունենա փաստաբանի արարքի որակումը Օրենքի, Պալատի կանոնադրության և/կամ Կանոնագրքի շրջանակներում:

Կանոնագրքը կազմված է ոչ միայն ուղղակի ներգործություն և իրավական հետևանքներ առաջացնող կանոններից, այլև փաստաբանի վարքագիծ էթիկական շրջանակները կանխորոշող սկզբունքներից, որոնց իրացման կառուցակարգը գործում է Կանոնագրքին համապատասխան՝ ուղղակի գործողություն ունեցող կանոնների միջոցով: Կանոնագրքի մի շարք կանոններ, իրենց հերթին, ունեն վկայակոչող (բլանկետային) բնույթ, և դրանցով նախատեսված կանոնակարգումն ավարտուն բնույթ է ստանում այլ իրավական ակտերի համապատասխան դրույթների հետ համակցության մեջ:

Կանոնագրքի կանոնները կիրառելիս հարկ է նկատի ունենալ, որ փաստաբանի վարքագիծի կանոնակարգումը չի սահմանափակվում միայն փաստաբանական էթիկայի կանոններով, այլ փաստաբանի՝ որպես մասնավոր և հանրային հարաբերությունների սուբյեկտի վարքագիծ ենթակա է այլ իրավական ակտերի նորմատիվ կարգավիրմանը: Արանից ուղղակիորեն հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական պատասխանատվությունը չի բացառում միևնույն արարքի համար նրա նկատմամբ իրավական պատասխանատվության այլ միջոցների կիրառումը:

Պալատի խորհրդադիր իրավասու է պարզաբանումներ տալ Փաստաբանի վարքագիծի կանոնագրքի կանոնների մեկնաբանման և/կամ կիրառման վերաբերյալ: Պալատի խորհրդի որոշմամբ տրված պարզաբանումներն իրավական ուժ ունեն և իրապարակվում են Պալատի կայքում, եթե այդ որոշմանը կողմ է քվեարկել Պալատի խորհրդի առնվազն ինը անդամ:»:

4. Կանոնագրքի 1.4 Ենթակետում՝

1) «**փաստաբանական գրասենյակ» սահմանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«(1) առևտրային կազմակերպություն, որն իրականացնում է փաստաբանական գործունեություն և նրա կանոնադրական կապիտալում 100 տոկոս մասնակցություն ունի փաստաբանը, իսկ գործադիր մարմնի (գործադիր տնօրեն, տնօրեն, կոլեգիալ գործադիր մարմին) լիազորությունները իրականացնում է փաստաբանը(ները) կամ (2) անհատ ձեռնարկատեր փաստաբան, ով իրականացնում է փաստաբանական գործունեություն անձամբ կամ աշխատակազմի միջոցով, կամ (3) ոչ առևտրային կազմակերպություն, որն իրականացնում է փաստաբանական գործունեություն.»:

2) «**հանրային նշանակության կազմակերպություն» սահմանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«Չոլկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և կապի, կոմունալ ոլորտներում, ինչպես նաև ֆինանսական շուկայում հանրությանը ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կազմակերպություններ (այդ թվում բանկեր, ապահովագրական կազմակերպություններ, գազի, ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարում իրականացնող կազմակերպություններ).»:

3) «**տարի» սահմանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

«օրացուցային տարի (12 ամիս), որը հաշվարկվում է վարքագիր կանոնում նշված օրվա կամ իրադարձության հաջորդ օրվանից.»:

5. Կանոնագրքի 1.4 Ենթակետը լրացնել ներքոշարադրյալ սահմանումներով՝ հետևյալ խմբագրությամբ.

«կարգապահական խախտում» - փաստաբանի կողմից Օրենքի, Պալատի կանոնադրության և/կամ սույն Կանոնագրքի որևէ կանոնի խախտում: Կարգապահական խախտում է համարվում նաև այն խախտումը, որը դրսկորվում է՝ ա. այլ փաստաբանի՝ Կանոնագրքի խախտմանը դրդելով կամ խախտման կատարմանն օժանդակելով կամ խախտման կատարումը կազմակերպելով.

բ. <<քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարելով.»

գ. անձնական կամ իր վստահորդի շահերի պաշտպանության նպատակով պետական մարմնի կամ պաշտոնատար անձի վրա ոչ իրավաչափ ազդեցություն գործադրելով.

ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում - սույն կանոնագրքով որպես կոպիտ որակված խախտումը, ինչպես նաև վարքագիր կանոնի ցանկացած խախտումը, որը հեղինակագրելում է փաստաբանի մասնագիտությունը: Կոպիտ է նաև փաստաբանի կողմից վարքագիր կանոնի պարբերաբար կատարված այն խախտումը, որը, առանձին վերցրած, կարող է այդպիսին չհամարվել, սակայն իր պարբերականությամբ հեղինակագրելում է փաստաբանի մասնագիտությունը.

շահերի բախում - փաստաբանի երկու կամ ավելի վստահորդների մասնավոր շահերի կամ վստահորդի մասնավոր շահերի և փաստաբանի մասնավոր շահերի

իրական կամ ողջամտորեն հավանական անհամատեղելիություն: Շահերի բախումն ընդգրկում է, սակայն, չի սահմանափակվում հետևյալ դեպքերով՝

- ա. փաստաբանի կողմից իր վստահորդի շահերի ներկայացումն ուղղակիորեն վնասում է փաստաբանի այլ վստահորդի շահերին.

- բ. առկա է անմիջական ռիսկ, որ փաստաբանի կողմից իր մեկ կամ մի քանի վստահորդների շահերի պաշտպանությունն էապես կսահմանափակի իր այլ վստահորդի նկատմամբ փաստաբանի պարտականությունների կատարումը.

Այլ մարմիններ - պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ, այդ թվում՝ քրեական հետապնդում իրականացնող մարմիններ, վարչարարություն և վարչական վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող մարմիններ:»:

6. Կանոնակարգի 2.1 կետը լրացնել 4-րդ պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ.

«Իր վստահորդի շահերը ներկայացնելիս փաստաբանը պետք է զերծ մնա այնպիսի գործողություններից, որոնք փաստաբանին կարող են նույնացնել իր վստահորդի հետ:»:

7. Կանոնակարգի 2.2.3 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2.2.3 Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում իր վարքագծով փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը

8. Կանոնագրքի 2.2 կետը լրացնել 2.2.4 և 2.2.5 ենթակետերով, հետևյալ բովանդակությամբ.

«2.2.4 Փաստաբանը պետք է զերծ մնա այնպիսի հայտարարություններից, որոնք կանխամտածված կերպով պարունակում են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ դատավորի, այլ պաշտոնատար անձի կամ փաստաբանի վերաբերյալ կամ անհարգալից վերաբերմունք դատավորի, այլ պաշտոնատար անձի կամ փաստաբանի մասնագիտական կարողությունների կամ անձնական հատկանիշների նկատմամբ:

2.2.5 Փաստաբանական էթիկայի սկզբունքներն ավելի բարձր են վստահորդի կամքի համեմատությամբ: Օրենքի չկատարման կամ սույն Կանոնագրքով նախատեսված կանոնների խախտմանն ուղղված վստահորդի ցանկությունները կամ պահանջները չեն կարող կատարվել փաստաբանի կողմից:»

9. Կանոնագրքի 2.3 կետը լրացնել 2.3.7 և 2.3.8 ենթակետերով, հետևյալ բովանդակությամբ.

«2.3.7 Եթե փաստաբանի կամ փաստաբանական գրասենյակի հետ պայմանագիր է կնքել վստահորդ չհանդիսացող պատվիրատուն, ապա վստահորդից իր լիազորությունների վերաբերյալ համապատասխան հավաստում ստանալուց հետո փաստաբանը պետք է զերծ մնա պատվիրատուին վստահորդի գործի հետ կապված որևէ տեղեկատվության տրամադրումից, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է

վստահորդի համապատասխան գրավոր հանձնարարությունը կամ համաձայնությունը:

2.3.8 Կանոնագրքի 2.3 կետի կիրառման իմաստով վստահորդ է համարվում ցանկացած անձ, որն իրավաբանական օգնություն ստանալու նպատակով տեղեկություն է տրամադրել փաստաբանին կամ փաստաբանական գրասենյակին:»:

10. Կանոնագրքի 2.6 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2.6. Վստահորդի շահերը

2.6.1 Օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի իրավաչափի շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:

2.6.2 Անկախ նրանից, թե փաստաբանի հետ պայմանագիր է կնքել անձամբ վստահորդը, թե պատվիրատուն, փաստաբանը մշտապես պետք է առաջնորդվի բացառապես վստահորդի շահերով:

2.6.3 Փաստաբանը, իր վստահորդի շահերից ելնելով, պետք է ձեռնարկի ողամիտ ջանքեր վերջինիս գործի դատական, վարչական, արբիտրաժային քննությանը կամ նրան վերաբերող իրավական այլ ընթացակարգերի արագ իրականացմանը նպաստելու համար:

2.6.4 Եթե իր վստահորդի շահերից է բխում գործի դատական, վարչական, արբիտրաժային կամ իրավական այլ ընթացակարգերի ձգձգումը, ապա փաստաբանը չի կարող սույն կանոնագրքին հակասող վարքագծով ձգձգել նշված գործընթացները:»:

11. Կանոնագրքի 2.9 կետը լրացնել 2.9.5 և 2.9.6 ենթակետերով՝ հետևյալ խմբագրությամբ.

«2.9.5 Փաստաբանը չի կարող Պալատի խորհրդի անդամների, նախագահի, որակավորման հանձնաժողովի անդամների կամ կարգապահական գործ նախապատրաստող անձանց նկատմամբ վիրավորական կամ զրապարտչական գործողություն իրականացնել (այդ թվում՝ վիրավորական քննադատություն), կապված վերջինների լիազորությունների իրականացման հետ: Սույն ենթակետում նշված արգելող կանոնը չի բացառում նրանց նկատմամբ փաստաբանի քննադատական վերաբերմունք ունենալը ու օրենքով սահմանված դեպքերում և կարգով նրանց գործողությունների բողոքարկումը:

2.9.6 Սույն Կանոնագրքի 2.9 կետում նշված հիմքով կարգապահական վարույթ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ նաև Պալատի աշխատակցի դիմումը:»:

12. Կանոնագրքի 2.10.1 ենթակետում «սահմանափակումը» բառից հետո ավելացնել «ինչպես նաև դատարանի որոշմամբ գործի քննության իրապարակայնության սահմանափակումից բխող պահանջները:»:

13. Կանոնագրքի 2.10.4 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.10.4 Փաստաբանը կամ փաստաբանական գրասենյակը կարող է իր կայքէջում կամ իր գովազդային նյութերում տեղադրել իր վստահորդների (այդ թվում՝

իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) մասին տվյալներ (առանց բացահայտելու գործի բնույթի կամ մանրամասները), եթե վերջիններիս հետ կնքված պայմանագրով այդպիսի հնարավորություն է նախատեսվել:»:

14. Կանոնագրքի 2.11.1 Ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.11.1 Փաստաբանը կամ փաստաբանական գրասենյակը պարտավոր է յուրաքանչյուր քրեական, քաղաքացիական կամ վարչական վարույթի վերաբերյալ կազմել համապատասխան փաստաբանական գործ (թղթապանակ), որտեղ պետք է կցվեն վարույթի հիմնական նյութերը: Սույն Ենթակետում նշված գործը գտնվում է փաստաբանական գաղտնիքի պաշտպանության տակ և փաստաբանը կամ փաստաբանական գրասենյակը իրավունք չունի դրանք տրամադրել որևէ երրորդ անձի (այդ թվում՝ այլ մարմիններին), բացառությամբ փաստաբանի և նրա վստահորդի որոշած, ինչպես նաև Օրենքով նախատեսված դեպքերի:»:

15. Կանոնագրքի 2.12.2 Ենթակետում 2-րդ նախադասության մեջ «ֆիզիկական անձանց» բառերից հետո լրացնել «և ոչ առևտրային կազմակերպություններին» բառերը:

16. Կանոնագրքի 2.13 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.13 Փաստաբանի անձնական գործ

Փաստաբանը պետք է հնարավորինս ձեռնպահ մնա իր կամ իր մերձավոր ազգականի գործը վարելուց:

Նշված պահանջի խախտումը պատասխանատվություն է առաջացնում, եթե իր կամ իր մերձավոր ազգականի գործը վարող փաստաբանը թույլ է տվել դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ բռնի կամ վիրավորական գործողություններ:»:

17. Կանոնագրքի 3.1.6 Ենթակետի 1-ին նախադասությունից առաջ ավելացնել պարբերություն՝ հետևյալ խմբագրությամբ.

«Փաստաբանը պարտավոր է զերծ մնալ վստահորդին այնպիսի հարցով կամ գործով խորհրդատվություն տրամադրելուց կամ այլ կերպ իրավաբանական օգնություն ցույց տալուց, որն ակնհայտորեն պարունակում է հանցագործության կամ ոչ իրավաչափ այլ արարքի հատկանիշներ:»:

18. Կանոնագրքի 3.1.7 Ենթակետի 2-րդ նախադասությունում «մի» բառը փոխարինել «մեկ այլ» բառով, իսկ «փաստաբանի հետ» բառերին հաջորդող «որը» բառը փոխարինել «ով» բառով:

19. Կանոնագրքի 3.1.9 Ենթակետի 1-ին նախադասությունում «հանձնարարություն» բառը, ինչպես նաև 2-րդ նախադասությունում «պատվերով» բառը փոխարինել «առաջարկ» բառով:

20. Կանոնագրքի 3.1 կետը լրացնել 3.1.12 Ենթակետով, հետևյալ բովանդակությամբ.

«3.1.12 Արծակուրդ մեկնելու կամ հարգելի այլ պատճառով իր վստահորդին վերաբերող դատական նիստին, դատավարական կամ քննչական գործողությանը մասնակցելու անհնարինության դեպքում, փաստաբանը պարտավոր է նախապես տեղեկացնել իր վստահորդին այդ մասին և ձեռնարկել իրենից կախված միջոցները նշված նիստը կամ գործողությունը հետաձգելու համար:»

21. Կանոնագրքի 3.2.2 Ենթակետի 2-րդ նախադասությունից հետո ավելացնել նախադասություն՝ հետևյալ խմբագրությամբ.

«Գրավոր համաձայնությունը համարվում է վավեր, եթե պարունակում է տեղեկություններ այն մասին, որ փաստաբանը վստահորդին տեղեկացրել է նման համաձայնություն տալու իրավական հետևանքների և հնարավոր ռիսկերի մասին:»:

22. Կանոնագրքի 3.2 կետը լրացնել 3.2.11-3.2.13 Ենթակետերով՝ հետևյալ խմբագրությամբ.

«3.2.11 Սույն կանոնագրքի 3.2 կետի պահանջները վերաբերում են նաև փաստաբանական գրասենյակներին: Նշված պահանջների պահպանման պարտականությունը կրում է փաստաբանական գրասենյակի գործադիր մարմնի փաստաբան ղեկավարը կամ անհատ ձեռարկատեր փաստաբանը:

3.2.12 Առնվազն 3 փաստաբան աշխատակից ունեցող փաստաբանական գրասենյակը պետք է ունենա շահերի հակասության և վստահորդի հանձնարարությունը բացառող Օրենքով կամ սույն Կանոնագրքով սահմանված հանգամանքների կանխարգելմանն ու մշտադիտարկմանն ուղղված ներքին իրավական ակտ (քաղաքականություն, հայեցակարգ, կարգ, կանոնակարգ, ընթացակարգ, հրահանգ կամ այլ իրավական ակտ):

3.2.13 Սույն կանոնագրքի 3.2.11 կամ 3.2.12 Ենթակետում նշված խախտումը հիմք է Փաստաբանական գրասենյակի գործադիր մարմնի փաստաբան ղեկավարին կամ անհատ ձեռարկատեր փաստաբանին կարգապահական պատասխանատվության Ենթարկելու համար, եթե փաստաբանական գրասենյակի նույն կամ տարբեր փաստաբաններ են ներկայացրել փաստաբանական գրասենյակի վստահորդների հակասող շահերը:»:

23. Կանոնագրքի 3.5.5 Ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.5.5 Փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից: Փաստաբանի սույն պարտականությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ փաստաբանի գործողություններն ուղղված են բացառապես այլ անձի պատիվը, արժանապատվությունը և (կամ) գործարար համբավն արատավորելուն, ինչպես նաև վստահորդի մասնակցության վարույթներն անհիմն և անհարկի պարբերաբար ձգձգելուն:»:

24. Կանոնագրքի 3.8 կետում՝

ա) 3.8.2 Ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

բ) 3.8.3 Ենթակետի նախաբանում «պայմանագրում» բառը փոխարինել «պայմանագրով» բառով.

գ) 3.8.3 Ենթակետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) Վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է գործողություններ կապված հանձնարության հետ, որոնք օրենքով արգելված են, կամ վստահորդի հանձնարարությունները կարող են հանգեցնել փաստաբանի կողմից «Հ օրենսդրության կամ Կանոնագրքի խախտմանը».

դ) 3.8.5 Ենթակետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) Վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցուց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ.»:

25. Կանոնագրքի 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Վարվելակերպի կանոնները դատարանում

Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի, արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին։ Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը։ Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսկորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կապատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ։»

26. Կանոնագրքի 5.2.1 ենթակետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«(1) թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ (ներառյալ այլ փաստաբանին վիրավորական քննադատելը).»:

27. Կանոնագրքի 8.1.3 կետում «վերաբերվել» բառը փոխարինել «վերաբերել» բառով։

28. Կանոնագրքի 9.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9.1. Կարգապահական պատասխանատվությունը արարքի կրկնակիության դեպքում

9.1.1 Մեկ տարվա ընթացքում փաստաբանի կողմից երեք անգամ կարգապահական խախտում թույլ տալուց հետո սույն կանոնագրքի որևէ կանոնի խախտում թույլ տալը համարվում է **ակնհայտ կոպիկ կարգապահական խախտում**, բացառությամբ այն դեպքի, երբ խախտումները թույլ են տրվել մեկ վարույթի (նախաքննության,

դատաքննության և այլ վարույթի) շրջանակներում: Սույն Ենթակետում նշված մեկ տարվա հաշվարկը սկսվում է առաջին կարգապահական խախտման կատարման օրվանից:

9.1.2 Կարգապահական խախտում կատարելու համար կարգապահական տույժի Ենթարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում նույնատիպ խախտումը կրկին կատարելը համարվում է **ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում**, բացառությամբ սույն կանոնագրքի 2.9 կետում նշված դեպքերի, ինչպես նաև այն դեպքի, երբ առաջին կարգապահական խախտման համար փաստաբանին կատմամբ կիրավել է ամենամեղմ կարգապահական տույժը՝ նկատողություն:

9.1.3 Առնվազն 18 (տասնութ) ամսվա անդամավճարի չափով պարտք ունեցող փաստաբանի կողմից հերթական որևէ ամսվա անդամավճարը չվճարելը համարվում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում: Առաջին անգամ սույն Ենթակետի հիմքով հարուցված կարգապահական վարույթի արդյունքում փաստաբանի նկատմամբ Պալատի խորհուրդը կիրառում է նկատողություն կամ խիստ նկատողություն, եթե փաստաբանն ամբողջությամբ վճարել է պարտքի գումարը և որոշումը կայացնելու օրվա դրությամբ Պալատի նկատմամբ անդամավճարի գծով որևէ պարտք չունի:»:

29. Կանոնագրքի 10-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Կանոնագրքի մեկնաբանման իրավունքը տրվում է Պալատի խորհրդին:

10.2 Պալատի խորհուրդը պարտավոր է ապահովել Կանոնագրքի միատեսակ կիրառումը: Պալատի խորհուրդը կարող է իր նախորդ դիրքորոշումը փոխել իրավունքի զարգացման նկատառումներից ելնելով: Այս դեպքում, Պալատի խորհուրդը պետք է ծանրակշիռ հիմնավորումներ ներկայացնի նախորդ դիրքորոշումը փոխելու անհրաժեշտության վերաբերյալ:

10.3 «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգ»-ը հանդիսանում է Կանոնագրքի անբաժանելի մասը:»:

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգում

30. Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ՝ Կարգ**) 2-րդ հովածում՝

1) «Պալատի խորհրդի քարտուղար» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պալատի խորհրդի քարտուղար՝ Պալատի աշխատակազմի համապատասխան աշխատակից.».

2) «Ծանուցման պատշաճ ձև» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ծանուցման պատշաճ ձև» տեղեկացման ձև, երբ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով։ Փաստաբանի դեպքում, պատշաճ ծանուցման ձև է համարվում նաև փաստաբանի էլեկտրոնային հասցեով ուղարկված համապատասխան ծանուցումը, ինչպես նաև Օրենքով կամ Պալատի կանոնադրությամբ նախատեսված այլ ձևով ծանուցումը։»

31. Կարգի 10-րդ հոդվածը լրացնել 7-րդ և 8-րդ մասերով, հետևյալ խմբագրությամբ՝

«7. Զանգվածային լրատվամիջոցի հրապարակման առիթով կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին Պալատի նախագահը որոշում կայացնում է միայն այն դեպքում, երբ առկա չէ կարգապահական վարույթ հարուցելու հիմքը և պատասխանող փաստաբանից բացատրություն է պահանջվել հրապարակման առիթով։

8. Այն դեպքում, երբ դիմողի ներկայացրած բողոքի (դիմումի) բովանդակությունը կամ կցված նյութերը բավարար չեն կարգապահական վարույթի հիմքի առկայության մասին եզրահանգման համար, ապա սույն հոդվածի 5-րդ մասում նշված անձը կարող է գրությամբ պատասխանել դիմողին։

32. Կարգի 13-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասով, հետևյալ խմբագրությամբ՝ «5. Նախապատրաստողն իրավասու չէ հրաժարվել իրեն մակագրված գործից, բացառությամբ բացարկի հիմքերի առկայության դեպքերից։»։

33. Կարգի 25-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմումը (բողոքը) Պալատ մուտքագրվելու պահից սույն մասում նշված վաղեմության ժամկետների ընթացքը կասեցվում է։»։

34. Կարգի 28-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով, հետևյալ խմբագրությամբ՝ «Կարգապահական վարույթը կարող է կարճվել կողմերի հաշտությամբ։»։

35. Կարգի 29-րդ հոդվածում՝

1) 5-ից 7-րդ մասերը շարադրել, հետևյալ խմբագրությամբ

«5. Կարգապահական գործը քննող պալատի խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների առնվազն կեսը։

Կարգապահական գործով խորհրդի դռնբաց նիստերին կարող են մասնակցել փաստաբանները՝ նիստերի դահլիճում համապատասխան հնարավորության առկայության դեպքում։

Խորհրդի դռնբաց նիստին ոչ փաստաբանի ներկայության հարցը լուծում է խորհրդող՝ համապատասխան դիմումի կամ միջնորդության հիման վրա՝ դռնփակ կամ դռնբաց քվեարկությամբ:

Սույն կարգով չնախատեսված խորհրդի նիստի վարման առանձնահատկությունները սահմանվում են՝ Պալատի խորհրդի կողմից հաստատած աշխատակարգով:

6. Նիստը նախագահողը կարող է խորհրդի նիստը հետաձգել միանձնյա որոշմամբ, եթե առաջացել են նիստի անցկացման անհնարինության դեպքեր: Նիստը նախագահողն անձամբ կամ Պալատի աշխատակազմի միջոցով տեղեկացնում է խորհրդի անդամներին, ինչպես նաև հնարավորության դեպքում՝ վարույթի կողմերին:

7. Պալատի խորհրդի նիստում նիստը նախագահողը համառոտ գեկուցում է դիմումը, Նախապատրաստողի կազմած եզրակացությունը, ինչպես նաև գործում գտնվող ապացույցները, որից հետո ձայնի իրավունք է տրվում կողմերին (ներկայության դեպքում սկզբից Դիմումին, իսկ վերջում՝ Պատասխանողին): Նիստը նախագահը կարող է կողմերի համար սահմանել ելույթի առավելագույն ժամանակ: Նիստը նախագահողը պատասխանատու է նիստի կարգ ու կանոնի պահպանման, ինչպես նաև կարգապահական վարույթի ժամկետի պահպանման համար: Կարգապահական գործով նիստը խոչընդոտող ներկա և վարույթի կողմ չհանդիսացող անձը կարող է հեռացվել խորհրդի նիստերի դահլիճից նիստը նախագահողի կարգադրությամբ:

Կարգապահական գործով նիստը խոչընդոտող վարույթի կողմը կամ ներկայացուցիչը կարող է հեռացվել խորհրդի նիստերի դահլիճից՝ խորհրդի որոշման հիման վրա: Այն դեպքում, երբ հնարավոր չէ առանց հեռացված կողմի կամ ներկայացուցիչ մասնակցության շարունակել խորհրդի նիստը, խորհրդող հետաձգում է այն:

Խորհրդի նիստերի դահլիճից անձի հեռացումն ապահովում է Պալատի աշխատակազմը:»

2) լրացնել 12-16-րդ մասերը հետևյալ բովանդակությամբ.

«12. Կարգապահական գործով խորհրդի նիստը կարող է հեռարձակվել միայն փաստաբանների համար՝ Պալատի խորհրդի հաստատած աշխատակարգում նշված դեպքերում և կարգով:

13. Միևնույն փաստաբանի մասնացությամբ մեկից ավելի կարգապահական գործերը կարող են միացվել և ըննվել մեկ վարույթում, եթե փաստաբանին մեղսագրվում է միատեսակ կարգապահական խախտումների կատարում:

14. Պալատի խորհրդում միացված գործերով կարգապահական վարույթով որոշում կայացնելիս պետք է առանձին անդրադառնա միացված գործերից յուրաքանչյուրում փաստաբանի մեղավորությանը կամ անմեղությանը, ինչպես նաև կարգապահական տույժ ընտրելիս պետք է հաշվի առնի միացված գործերից յուրաքանչյուրով փաստաբանի մեղավորությունը կամ անմեղությունը:

15. Միատեսակ կարգապահական գործերը մեկ վարույթում միացնելու մասին որոշումն ընդունում է՝

ա. Պալատի նախագահը՝ կարգապահական գործի հարուցման կամ կարգապահական գործի նախապատրաստման փուլում.

բ. Պալատի խորհրդողը՝ կարգապահական գործի ըստ էության քննության փուլում:

16. Սույն հոդվածի 15-րդ մասի «բ» կետում նշված դեպքում՝

ա. Պալատի խորհուրդը կայացնում է որոշում առանց կողմերի մասնակցության.թ. Պալատի խորհրդի որոշմամբ նշանակվում է միացված գործերով խորհրդի նիստի նախագահող:»

36. Կարգի 30-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Այն դեպքում, եթե խորհրդակցական սենյակում ընդունված որոշմանը դեմ է քվեարկել նիստը նախագահողը, ապա նիստը նախագահողի փոխարեն խորհրդի որոշումը կազմում և ստորագրում է խորհրդի այլ անդամ (տվյալ անդամը որոշվում է ընդունված որոշմանը միացած խորհրդի անդամների մեծամասնության կողմից՝ նրանց կազմից):»:

37. Կարգի 34-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ.

«4. Վերանայման վարույթով գործի քննությունը Պալատի խորհուրդն իրականացնում է ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան վերանայման վարույթ սկսելու մասին որոշում կայացնելուց հետո՝ չորս ամսվա ընթացքում:»: